



Գլխավոր հաշվապահ Իրինա Օհանյան

Իրինա Օհանյանը միացել է ՄԵՖ-ի թիմին 2004 թ.՝ զարգացնելու Կազմակերպության ֆինանսական հաշվառման և ռիսկերի կառավարման համակարգերը: Նա կատարելագործել է Կազմակերպության ֆինանսական և տեղեկատվական համակարգը, ավտոմատացրել հաշվապահական գործընթացները, հաշվետվությունների պատրաստման ու ներկայացման գործընթացները՝ ձևավորելով կենտրոնացված ֆինանսական ռիսկերի կառավարման համակարգ:

Տիկին Օհանյանի անմիջական մասնակցությամբ Կազմակերպությունում գործարկվել է տեղեկատվական նոր համակարգ:

Նախքան ՄԵՖ-ի թիմին միանալը տիկին Օհանյանն աշխատել է գիտահետազոտական ոլորտում շուրջ 8 տարի: Նա որպես ինժեներ իրականացրել է ռադիոֆիզիկական հաշվարկներ և չափումներ Երևանի ռադիոֆիզիկական չափումների գիտահետազոտական ինստիտուտում: Ավելի ուշ տիկին Օհանյանը միացել է բանկային ոլորտին, որտեղ աշխատում է արդեն ավելի քան 20 տարի: Նա աշխատել է Զարգացման Հայկական Բանկում, որտեղ 12 տարիների ընթացքում իրականացրել է հաշվապահական վերլուծություններ, կատարելագործել հաշվապահական գործընթացները, ստեղծել հաշվետվությունների ներկայացման նոր ձևեր, որոնք հնարավորություն են տալիս ստանալ առանցքային ֆինանսական տվյալներ՝ առանց վերջիններիս նախապատրաստման վրա ժամանակ ծախսելու: Զարգացման հայկական բանկում տիկին Օհանյանը կատարելագործել է տարբեր բանկային և ինֆորմացիոն ծառայությունների համակարգեր՝ դարձնելով դրանք ավելի ճկուն և հաճախորդների համար ավելի կիրառելի: